«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 30-02/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 23.10.2018թ. ժամը 16:00

Համաձայն 31.05.2018թ. գրությամբ՝ ՀՀ վարչապետին հասցեագրված և 2018թ-ի հունիսի 27-ին ՀՀ կառավարության աշխատակազմից թիվ 21/21.14/12406-18 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն վերահացեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 15.08.2018թ-ին ստացված, քաղաքացի Սոնա Ազիզյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի հոկտեմբերի 23-ին ժամը 16.00-ին՝ հետաձգված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու Սոնա Ազիզյանը
«Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
«Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանը

Դիմումատու Սոնա Ազիզյանը պատշաճ ծանուցվել էր նիստի մասին, սակայն նիստին չէր ներկայացել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
31.05.2018թ. գրությամբ՝ ՀՀ վարչապետին հասցեագրված և 2018թ-ի հունիսի 27-ին ՀՀ կառավարության աշխատակազմից թիվ 21/21.14/12406-18 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն վերահացեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 15.08.2018թ-ին ստացված դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, որ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.4-րդ կետի համաձայն, հանձնաժողովի նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված սնանկության գործով կառավրչի և/կամ այլ անձնաց բացակայությունը արգելք չէ կառավարչի

նկատմամբ հարուցված կարգապահական խախտման քննարկման համար և առաջարկեց նիստը շարունակել առանց դիմամտուի, քանի որ կողմը պատշաճ ծանուցվել է:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը, ստուգեց կարգապահական վարույթի կողմերի և հանձնաժողովի անդամների ներկայությունը: Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, որ 05.10.2018թ-ին նշանակվել էր նիստ, որը հետաձգվել էր, քանի որ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանը և դ իմումատու Սոնա Ազիզյանը ծանուցվել էր նիստի մասին, սակայն նիստին չէր ներկայացել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմերի բացակայության պայմաններում առանցքային հարցեր մնում էին չպարզաբանված, նիստը հետաձգվել էր:
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը հակիրճ ներկայացրեց բողոքի բովանդակությունը: Բողոքաբերը նշել է, որ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի հետ կնքել է առքուվաճառքի պայմանագիր, որի համաձայն պետք է Սոնա Ազիզյանին հանձնվեր Երևան քաղաքի Կենտրոն համայնքի «Բերդ 2» թաղամասի 15-րդ մասնաշենքում գտնվող բնակարան: Պայմանագրի համաձայն Սոնա Ազիզյանը բնակարանի գնի մեկ տոկոսի չափով պետք է քառասուն ամիս շարունակ վճարում կատարեր, ինչը և նրա կողմից բարեխղճորեն կատարվել է, մասնավորապես, ըստ կից ներկայցված փաստաթղթերի նա վճարել է 10 024 000 ՀՀ դրամ: Ըստ պայմանագրի քառասուն ամիս հետո բնակարանի շինարարությունը պետք է ավարտված լիներ և ընդունում-հանձնում կատարելուց հետո Սոնա Ազիզյանը պետք է միանվագ վճարեր մնացած ամբողջ գումարը: Սակայն շինարարության ավարտը հետաձգվեց և ի վերջո շինարարություն իրականացնող կազմակերպությունը սնանկ ճանաչվեց:
ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց կարգապահական հանձնաժողովի անդամներին Կարեն Ասատրյանի կողմից ներկայացված պատասխանը:Պատասխանում սնանկության գործով կառավարիչը մասնավորապես նշել է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի ԵԿԴ/0078/04/45 սնանկության գործով 22.12.2015թ-ի վճռով «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ: Նույն դատարանի 29.12.2015թ որոշմամբ նշանակվել է «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.11.2016թ-ի ԵԿԴ/0078/04/45 որոշմամբ հաստատվել է պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, որում ընդգրկված է Սոնա Ազիզյանի պահանջը որպես «Է» հերթի չապահովված պահանջ: Դատարանի 25.01.2017թ. որոշմամբ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ: Պատասխանում նաև նշվել է, որ չապահովված պահանջների բավարարման հերթականությունը սահմանվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածով, իսկ գույքի վաճառքից ստացված միջոցներից բաշխումը իրականացվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածով սահմանված կարգով, իսկ պահանջների բավարարման կարգը սահմանվում է 84-րդ հոդվածով:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ձայնի իրավունք տվեց«Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Կ. Ասատրյանին: Վերջինս պնդեց այն ինչ գրել էր պատասխանի մեջ, ավելացնելով, որ նույնիսկ եթե ինքը ցանկանա առաջնահերթ բավարարում տալ բողոք բերող անձի պահանջին, դա հնարավոր չէ, քանի որ կա օրենքով սահմանված կարգ, պարտատերերի պահանջների բավարարման հերթականություն մասնավորապես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի հիմքով, որպես չապահովված պահանջատեր, Սոնա Ազիզյանի պահանջը գրանցվել է պարտատերերի պահանջների վերջնական ցուցակում որպես «Է» հերթի չապահովված պահանջ՝ 30 697 056 ՀՀ դրամի չափով, որից10 024 000 ՀՀ դրամը որպես հիմնական պարտք, 20 673 056 ՀՀ դրամը հաշվարկված տույժ: Այսինքն նա գործել է օրենքի շրջանակներում և սնանկության վարույթում արել է բոլոր գործառույթները, որը պարտավոր էր կատարել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն: «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչը ավելացրեց, որ սնանկության վարույթը դեռ ընթացքի մեջ է և դրամական միջոցների բաշխում դեռևս կատարված չէ:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի անդամ Արմենակ Աղամյանը ձայնի իրավունք վերցնելով արտահայտեց այն կարծիքը, որ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանի գործողությունների մեջ չի տեսնում օրենքի խախտում և այն հանգամանքը, որ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն սնանկ է ճանչվել չկա կառավարչի մեղավորությունը և իր լիազորությունների շրջանակներում նա իրականացրել է պահանջի գրանցում, իսկ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն Սոնա Ազիզյանի պահանջը հանդիսանում է չապահովված պահանջ, քանի ոև ապահովված չէ գրավով կամ երաշխիքով /երաշխավորությամբ/ և որ սնանկության վարույթը ընթացքի մեջ է: Կառավարիչը գործել է օրենքի շրջանակներում և իրականացնում է իր վրա դրված պարտականությունները: Պահանջատերերը բազմաթիվ են և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի համապատասխան կբավարարվեն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 5
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝
1. 31.05.2018թ. գրությամբ՝ ՀՀ վարչապետին հասցեագրված և 2018թ-ի հունիսի 27-ին ՀՀ կառավարության աշխատակազմից թիվ 21/21.14/12406-18 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 15.08.2018թ-ին ստացված, քաղաքացի Սոնա Ազիզյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Գլենդել Հիլզ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը կարճել:
2.Սույն եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Աղամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան